Հաշվետու՝ 2017թ.-ին «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ-ն, հավատարիմ մնալով սահմանված ռազմավարական նպատակների արդյունավետ իրագործման ավանդույթին, արձանագրեց մի շարք էական նվաճումներ և հիմնական ցուցանիշների զգալի աճ՝ շնորհիվ հաճախորդների վստահության, հավատարմության և Բանկի աշխատակիցների նվիրված ջանքերի, արդյունավետ ու ակտիվ թիմային աշխատանքի՝ ապահովելով բանկի շարունակական կայուն զարգացումը և գործունեության որակապես նոր՝ առավել արդիական փուլին անցումը:

Բանկի գործունեության կարևորագույն գնահատականներից է շահույթի ավելի քան 2.6 անգամ կամ 960.0 մլն. դրամով աճը, որը կազմել է 1,550.4 մլն դրամ:

2017թ., նախորդ տարվա համեմատ, բանկի ակտիվները աճել են 44.6 մլրդ դրամով կամ 30.5%-ով՝ կազմելով 190.8 մլրդ դրամ, ընդ որում՝ եկամտաբեր ակտիվներից հաճախորդներին տրված վարկերը աճել են 29.2 մլրդ դրամով կամ 38.8%-ով՝ կազմելով 104.2 մլրդ դրամ, իսկ վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվները՝ 5.6 մլրդ դրամով կամ 34.9%-ով՝ կազմելով 21.7 մլրդ դրամ:

Բանկի պարտավորությունները, որոնք ձևավորվել են ներքին և արտաքին շուկաներից ներգրավված ժամկետային միջոցների և ցպահանջ միջոցների հաշվին, հաշվետու տարում աճել են 36.4%-ով կազմելով՝ 161.8 մլրդ. դրամ: Հաճախորդների նկատմամբ պարտավորություններն աճել են 24.9 մլրդ դրամով կամ 37.3%-ով՝ կազմելով 91.7 մլրդ դրամ, ինչը վկայում է բանկի նկատմամբ հաճախորդների վստահության շարունակական աճի մասին: Բանկի կապիտալն աճել է 5.3%-ով՝ կազմելով 29.0 մլրդ դրամ՝ հիմնականում ներքին աղբյուրի՝ ձևավոևված շահույթի հաշվին:

Հաշվետու տարում բանկը շարունակեց փոխշահավետ համագործակցությունը միջազգային ֆինանսավարկային կառույցների և արտերկրի խոշորագույն առևտրային բանկերի ու ֆինանսական կազմակերպությունների հետ՝ ընդլայնելով համագործակցության շրջանակները, գործող ծրագրերը, ինչպես նաև ծավալվեց գործակցություն նոր բանկային ծառայությունների ոլորտում: Այսպես. 2017թ. բանկը միջազգային ֆինանսավարկային կառույցների հետ կնքել է ավելի քան 24 մլն ԱՄՆ դոլարի և 2.4 մլրդ դրամի վարկային պայմանագրեր, որոնցով ներգրավված ռեսուրսներն ուղվելու են միկրո, փոքր և միջին բիզնեսի վարկավորմանը և զարգացմանը:

Հաշվետու տարվա բանկի արդյունավետ տարածքային քաղաքականության մասին են վկայում նախորդ տարիներին գործարկված մասնաճյուղերի կայուն և դինամիկ զարգացումը, ինչպես նաև տարվա ընթացքում գործարկված մասնաճյուղերի գործունեությունը: 2017թ. իրականացվեցին մի շարք մասնաճյուղերի վերակառուցում և վերանորոգում, տեխնիկական վերազինում՝ մոտեցնելով դրանք միջազգային չափանիշներին:

Բանկի զարգացման արձանագրված հաջողությունները մեծապես պայմանավորված են արդյունավետ կադրային քաղաքականությամբ, որը զուգակցում է կադրերի վերապատրաստումը գործուն խրախուսման համակարգի ներդրման հետ:

ՀՀ ֆինանսաբանկային հատվածում, ինչպես նախորդ տարիները, 2017թ. ևս, բնորոշվեց որպես համակարգի կանոնակարգվածության, կառավարելիության, թափանցիկության ավելացմանը նպատակաուղղված միջոցառումների իրականացման տարի:

Պայմանավորված ՀՀ ԿԲ կողմից սահմանած 2017թ. հունվարի 1-ից 30.0 մլրդ ՀՀ դրամ նորմատիվային կապիտալի նվազագույն շեմի պահանջով, 2016թ. տեղի ունեցավ որոշ բանկերի միավորումներ, էականորեն աճեցին պահպանվող բանկերի կապիտալները՝ հիմնականում կանոնադրական կապիտալներում ներդրումների հաշվին, ինչպես նաև որոշ բանկեր ներգրավեցին մեծ ծավավալով երկարաժամկետ ստորադաս փոխառություններ, որի արդյունքում 2017թ. շուկայում առաջացավ իրացվելիության ավելցուկ, որով պայմանավորված նվազեցին տեղաբաշխման և ներգրավման տոկոսադրույքները, որը որոշակի չափով նվազեցրեց ակնկալվող եկամուտները:

«ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ պահպանեց իր մրցունակությունը հաճախորդների մոտ ունեցած մեծ վստահության շնորհիվ և գրանցեց հիմնական ցուցանիշների զգալի աճ:

Միևնույն ժամանակ սրվող մրցակցությունը նպաստում է համակարգի ընդհանուր առաջընթացին՝ պայմանավորված մրցակցությանը դիմանալու նպատակով բանկերի կողմից ձեռնարկվող միջոցառումներով: ՀՀ բանկային շուկայում դիրքերը պահպանելու և առաջընթաց զարգացում ապահովելու նպատակով՝ բանկը.

- մեծ ուշադրություն է դարձնում մատուցվող ծառայությունների ոչ միայն քանակական բազմազանմանը՝ նոր վարկային և ավանդային ծառայությունների մշակման և ներդրման առումով, այլ նաև որակի բարձրացմանը, հաճախորդների սպասարկման ոլորտում նորագույն արդիական թվային տեխնոլոգիաների կիրառմանը, ինչին և նպատակաուղղվում է կապիտալ ներդրումների որոշակի մասը,
- իրականացնում է ակտիվ գովազդային քաղաքականություն բանկի կողմից մատուցվող նոր ծառայությունները և նոր սակագները հասարակության լայն շերտերին իրազեկելու համար,
- արձագանքելով ներքին շուկայում տեղի ունեցող զարգացումներին՝ բանկը վարում է ճկուն սակագնային և տոկոսադրույքային քաղաքականություն:

Ռիսկերի բացահայտման և կառավարման գործուն համակարգի կատարելագործմանն ուղղված միջոցառումները մշտապես գտնվում են բանկի ղեկավարության ուշադրության կենտրոնում: Բանկի ռիսկերի կառավարման գոյություն ունեցող համակարգը, որը ներառում է ««ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ ռիսկերի կառավարման» քաղաքականությունը՝ ըստ տարբեր ռիսկատեսակների կից կարգերով մշտապես զարգանում ու կատարելագործվում է, որը առաջիկայում նույնպես կզարգանա, կկատարելագործվի և կունենա նոր որակական մակարդակներ:

Անդրադառնանք բանկի այն արժանիքներին և միջոցներին (ուժեղ կողմերին), որոնց արժեքը ՖՀՄՍ-ների համաձայն չի արտացոլվում հաշվապահական հաշվեկշռում: Այսպես. բանկի ուժեղ կողմերի շարքին են դասվում.

- Բանկի դրական գործարար համբավը, թափանցիկ գործելաոճը և բանկ-հաճախորդ առողջ համագործակցության առկայությունը:
- Բանկում արդեն իսկ գործող և ավելի ու ավելի ամրապնդվող ու զարգացող կորպորատիվ կառավարման սկզբունքների հիման վրա որդեգրված կառավարման մեխանիզմը, որը հստակ կանոնակարգում և սահմանում է

կառավարման յուրաքանչյուր օղակի գործելակերպը՝ թե՛ որոշումների ընդունման, թե՛ դրանց կատարման և վերահսկողության առումով:

- ISO/IEC 27001 (Տեղեկատվության անվտանգության կառավարման համակարգ) հավաստագրի առկայությունը:
- Դրված խնդիրներին և դրանց փոփոխությանը, միջավայրի փոփոխություններին բանկի ճկուն արձագանքելու ունակությունը:
- Տարածքային արդյունավետ քաղաքականության իրականացումը՝ հաշվի առնելով լայն մասնաճյուղային ցանցի առկայությունը և հնարավորությունները:
- Միջազգային ֆինանսական կազմակերպությունների հետ ձևավորված և կայուն զարգացում ապրող հարաբերությունները:
- Երիտասարդ հեռանկարային կադրերի ներգրավումը:
- Գործունեության խրախուսման, ռեյտինգավորման և բոնուսային համակարգերի կիրառումը:
- Կադրերի պարբերական վերապատրաստումը:
- Կապիտալիզացիայի բավարար մակարդակը:
- Իրացվելիության բավարար մակարդակը:
- Վարկային առողջ և դիվերսիֆիկացված պորտֆելի առկայությունը:
- Ռեսուրսների աղբյուրների դիվերսիֆիկացման բարձր մակարդակը:
- Բանկային ռիսկերի կառավարման բարձր մակարդակը:
- Ռիսկերի ապահովագրության առկայությունը:
- Զարգացած տեղեկատվական և տեխնոլոգիական ենթակառուցվածքը և դրա բարելավման արագ տեմպերը:
- Ճկուն սակագնային և տոկոսադրույքային քաղաքականությունը:

Խորհրդի նախագահի տեղակալ Ա. Նալչյան

Խորհրդի անդամ Ա. Մելիքյան